ՈՐԱԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ԲԱԺԻՆ
✆374 10 553310/116 ☎+37493464789 gagik.ktryan@sportedu.am www.sportedu.am Հայաստանի Հանրապետություն, Երևան, 0070, Ա. Մանուկյան 11

«ՖԻԶԻԿԱԿԱՆ ԴԱՍՏԻԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ ԵՎ ՍՊՈՐՏԱՅԻՆ ՄԱՐԶՈՒՄՆԵՐ» ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԻ ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅԻ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

(ՖՈԿՈՒՍ ԽՄԲԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՈՒՄ)

07.07.2025թ.

ՖՈԿՈՒՍ ԽՄԲԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ

ՀԱՐՑԱՇԱՐ

1. Ներկայացեք խնդրեմ և նշեք, թե քանի մարզիչ/ուսուցիչ կա ձեր հաստատությունում ՀՖԿՍՊԻ շրջանավարտներից:
2. Որո՞նք են ըստ Ձեզ ՀՖԿՍՊԻ շրջանավարտների առանձնահատկությունները, ինչո՞վ են նրանք տարբերվում մյուս հաստատությունների շրջանավարտներից:
3. Մարզչի/ուսուցչի ո՞ր որակներն եք կարևորում: Ի՞նչն է կարևորվում մարզչի/ուսուցչի աշխատանքում, ինչի՞ն պետք է պատրաստ լինեն աշխատանքի անցնելիս:
4. Կա՞ն արդյոք մասնագիտական խնդիրներ, որոնց բախվում են ինստիտուտի շրջանավարտները աշխատանքի անցնելիս, որոնք են դրանք: Ինչպիսի՞ հմտությունների պակաս ունեն:
5. Ձեզանից նրանք, որոնք ավարտել են այս ինստիտուտը, ի՞նչն է փոխվել ըստ ձեզ ներկայիս կրթական ծրագրերում՝ ձեր ժամանակվա համեմատ: Դա դրական ե՞ք համարում, թե՞ ոչ:
6. Ի՞նչը կփոխեիք կրթական ծրագրում, ինչի՞ն ավելի շատ ուշադրություն կդարձնեիք: Ի՞նչն եք ավելորդ համարում:
7. Ինչպիսի՞ առաջարկներ ունեք ինստիտուտի շրջանավարտների մասնագիտական կարողությունների զարգացման համար:
8. Վերջին տարիներին ե՞րբ և որտե՞ղ եք մասնակցել մասնագիտական վերապատրաստման դասընթացների:
9. Ի՞նչ ուղղություններով եք տեսնում ինստիտուտի հետագա զարգացումը:

ՖՈԿՈՒՍ ԽՄԲԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ
ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Քննարկման թեմաներ		Գրառումներ
Հանդիպում արտաքին շահակիցների՝ մարզիչների և ուսուցիչների հետ 18.06.2025, ժամը՝ 11:00-12:30		
1.	Մասնակիցների մասին տվյալներ	- Գուրգեն Բեգլարյան. Կոտայքի մարզի Ջրառատի միջն. դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցիչ, - Վարդան Ստեփանյան. Խաղային մարզաձևերի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցի մարզիչ, - Դավիթ Դավթյան. Խաղային մարզաձևերի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոցի մարզիչ–ուսուցիչ, - Կամո Կիրակոսյան. Հանրապետության վաստակավոր մարզիչ, ըմբշամարտի ամբիոնի դասախոս, «Տորք Անգեղ» մարզամշակութային կենտրոնի մարզիչ, - Վարդան Ներսիսյան. Բռնցքամարտի ամբիոնի դասախոս, «Տորք Անգեղ» մարզամշակութային կենտրոնի բռնցքամարտի մարզիչ, - Վախթանգ Մկրտչյան. «Տորք Անգեղ» մարզամշակութային կենտրոնի բռնցքամարտի մարզիչ, Ջրվեժի միջնակարգ դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցիչ, - Վիգեն Գևորգյան. Շենգավիթի հ.1 մարզադպրոցի հանդբոլի մարզիչ, Երևանի թիվ 93 միջն. դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցիչ, - Անի Անտոնյան. Աբովյան քաղաքի «Գ. Ծառուկյանի անվան սպորտի և մշակույթի համալիր» կենտրոնի գործավար, - Արամայիս Մուրադյան. Աբովյան քաղաքի «Գ. Ծառուկյանի անվան սպորտի և մշակույթի համալիր» կենտրոնի լողի մարզիչ, Աբովյանի պետական էներգետիկական քոլեջի ֆիզկուլտուրայի ուսուցիչ, - Ռուզան Մինասյան. հ.187 միջնակարգ դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցչուհի, ֆիթնեսի մարզիչ,

		- Աննա Մարտիրոսյան. Կոտայքի մարզի Բյուրեղավանի հիմն. դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցչուհի, Արթիկի մանկապատանեկան մարզադպրոցի բասկետբոլի մարզիչ, - Շամամ Արզումանյան. Կոտայքի մարզի Նոր Հաճնի ավագ դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցչուհի, - Գայանե Արշակյան. Աբովյանի Վ. Համբարձումյանի անվ. թիվ 10 հիմնական դպրոցի ֆիզկուլտուրայի ուսուցչուհի: Բոլոր մասնակիցները ՀՖԿՍՊԻ–ի տարբեր տարիների շրջանավարտներ են: Ներկաները նշեցին, որ իրենց կամ իրենց ծանոթ մարզադպրոցներում բացի ինստիտուտի շրջանավարտներից չգիտեն այլ բուհեր ավարտածների, սակայն կան նաև վաստակաշատ՝ տարիքով մեծ մասնագետներ՝ նախկինում տեխնիկում ավարտած:
2.	Ֆիզիկական կուլտուրայի և սպորտի ոլորտի խնդիրները, աշխատաշուկայի կարիքները	Քննարկումից պարզ դարձավ, որ իրականում մարզադպրոցների և հանրակրթական դպրոցների աշխատանքը էապես տարբեր է: Մարզադպրոցներ գալիս են կողմնորոշված, նպատակաուղղված մարզվելու, իսկ դպրոցի շատ երեխաների չի հետաքրքրում ֆիզկուլտուրա առարկան, հետաքրքրված չեն: Մյուս կողմից մարզադպրոցներից ինստիտուտ դիմորդները արդեն իսկ մարզիկներ են և իրենց համար հեշտ է ինտեգրվել բուհի ուսումնական գործընթացին և միջավայրին: Շեշտադրվեց մարզչական կամ մանկավարժական գործունեության մեջ հոգեբանական հմտությունների կարևորությունը: Ըստ մասնակիցների՝ ցանկացած մարզիչ կամ մանկավարժ պետք է տիրապետի հոգեբանական հմտությունների, որպեսզի կարողանա երեխաների հետ աշխատել: Օրինակ, Աբովյան քաղաքի Գ. Ծառուկյանի անվան սպորտի և մշակույթի համալիր կենտրոնում սպորտային հոգեբանության հաստիք են ավելացրել՝ մարզիկների հետ մասնագիտական զրույցներ վարելու համար: Ինչը դրական արդյունք է ապահովել: Մասնակիցներից որոշների համար էլ դա պարտադիր չէ: Ինչպես նշեց մասնակիցներից մեկը՝ «Մարզիչից լավ իր սաների հետ ոչ մի հոգեբան չի աշխատի»: Բացի այդ Ինստիտուտում իր ուսանողության տարիներին «Սպորտի հոգեբանություն» առարկա են անցել և դա բավարար է եղել իր մարզչական գործունեության համար: Հատկապես կարևորվեցին հոգեբանական հմտությունները ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատանքի համար: Ինչպես նշվեց. ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատանքի

		առանձնահատկություններին տիրապետելու, համապատասխան ԱՈՒՊ–ների կազմման վերապատրաստումների, դասընթացների և սեմինարների խիստ կարիք կա: Նման առարկաներ չեն անցել մասնակիցները ինստիտուտի ծրագրով, ուստի ներկայումս, ներառականության ոլորտի կարևորման և դպրոցներում դրանց ընդգրկման փաստից ելնելով, առաջարկում են ներառել նմանատիպ դասընթացներ բուհի ծրագրերում: Ուսուցիչներից մեկի կարծիքով բուհը պետք է ավելի շատ համագործակցի «կրթական համակարգի» հետ: Մասնավորապես խնդիրը գալիս է նրանից, որ չափորոշիչներ մշակելիս ակնկալվում է, որ ինստիտուտը մասնագիտական կարծիք և խորհրդատվություն ապահովի մշակող խմբի համար, քանի որ դպրոցական ծրագրերում երբեմն անհասկանալի և ոչ իրատեսական պահանջներ են դրվում, մասնավորապես գնահատման հետ կապված, որ ֆիզկուլտուրայի գնահատումը պետք է զուտ թեստային լինի: Մյուս մասնակիցը հակադարձեց, որ Ֆիզկուլտուրայի 2-ից 12–րդ դասարանի գնահատման ձեռնարկ կա, որի մեջ և՛ թեստային, և՛ գործնական տարբերակներով են գնահատումները, գրված են նորմատիվներ և դրանց գնահատման սանդղակը: Ֆիզկուլտուրայի առումով չափորոշիչները չեն փոխվել: Գնահատման ժամանակ տրվում են 4 տեսական և 6 գործնական հարցեր: Քննարկումից պարզ դարձավ, որ չափորոշիչների իմացության և դրանց վերաբերյալ տեղեկատվության տարածման խնդիր կա ուսուցիչների շրջանում: Մյուս կողմից նշվեց, որ 2023թ–ի Ֆիզկուլտուրայի նոր ծրագրում չկա մարզաձևերի համար հստակ ժամերի տարանջատում. ուսուցիչը ինքն է որոշում, որին ինչքան ժամ տա: Ծրագիրը հնարավորություն է տալիս ուսուցչին դպրոցի ռեսուրսներին համապատասխան անցնել Ֆիզկուլտուրա առարկան: Օրինակ, եթե վոլեյբոլին հարմարեցված դահիճ չունի, ապա դրան ժամեր չտրամադրի: Նույնիսկ հնչեց, որ կարող են միայն տեսական անցնել, եթե պայմաններ չկան: Այսինքն ծրագիրը հարմարեցվում է դպրոցում առկա ռեսուրսներին: Մասնակիցներից մեկի պնդմամբ՝ դպրոցներում Ֆիզկուլտուրայի տարեկան պլան–գրաֆիկները չեն համապատասխանեցված իրական պայմաններին. ընտրովի ուսումնական նյութերի տակ երբեմն ոչ իրատեսական բաներ են գրվում: Օրինակ, 3–ական ժամով մարզախաղ են դնում: Հարց է առաջանում. 3 ժամում ի՞նչ պիտի անի, ի՞նչ սովորեցնի, կամ 6 մարզախաղ 1 կիսամյակում ինչպե՞ս պիտի անցնի: Մասնակիցներն ակնկալում էին, որ Ինստիտուտն այդ մասով վերահսկի ոլորտը: Բացի այդ ոչ բոլոր մարզիչներն ու

		ուսուցիչներն ունեն տեղեկատվական տեխնոլոգիաների պատշաճ կիրառման հմտություն-ներ չափորոշիչներին համապատասխան աշխատելու համար:
3.	Մարզչի/ուսուցչի կարևոր որակները աշխատանքում: Մասնագիտական խնդիրներ, որոնց բախվում են ինստիտուտի շրջանավարտները աշխատանքի անցնելիս	Ինստիտուտի շրջանավարտները, մասնավորապես՝ Ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչները, դասարանում կրթական առանձնահատուկ պայմանների կարիք ունեցող (ԿԱՊԿՈՒ) երեխաների առկայության դեպքում բախվում են մի շարք մասնագիտական և կազմակերպչական դժվարությունների: Նրանք նշեցին, որ ուսուցչի օգնականներ ունեն, սակայն այդ օգնականներն էլ հաճախ բավարար գիտելիք չունեն ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատելու համար: Շատ դեպքերում օգնականները ոլորտային կրթություն կամ փորձառություն չեն ունենում: Որոշ ուսուցիչներ նշեցին, որ իրենք դասից դուրս՝ արտաժամյա, պարապում են այդ երեխաների հետ՝ ծնողի խնդրանքով: Ֆիզիկական կուլտուրայի ուսուցիչները ԿԱՊԿՈՒ երեխաների հետ արդյունավետ աշխատելու համար կարիք ունեն մասնագիտական վերապատրաստման դասընթացների, քանի որ նմանատիպ դասընթացների չեն մասնակցել: Ըստ այդմ ուսուցիչները ծանոթ չեն գործող իրավական կարգավորումներին և ընթացակարգերին՝ ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատանքի կազմակերպման և անհատական ուսումնական պլանների (ԱՈՒՊ) լրացման տեխնիկական առանձնահատկություններին: Շրջանավարտները տեսականորեն պատրաստ են աշխատել հանրակրթական դպրոցներում և մարզադպրոցներում, սակայն նրանց մոտ առկա է պրակտիկ փորձի պակաս: Պրակտիկաների անցկացմանը պետք է մեծ ուշադրություն դարձվի: Մարզիչ-ներից մեկը նշեց, որ առաջներում (իրենց ժամանակ) 3–րդ կուրսում ուսանողը կարող էր մարզիչ աշխատել պրակտիկայի վայրում, ու դա լավագույն պրակտիկան էր լինում: Այսինքն ըստ էության դուալ ձևաչափով ուսումնառության մոդելին են կողմ: Ըստ մասնակիցների՝ ուսանողն այդ ընթացքում հմտանում էր և ավելի պատրաստ էր լինում ապագա մասնագի-տական գործունեությանը: Ներկայիս կարգավորումներով ուսանողին թույլ չի տրվում աշխատել որպես մարզիչ որևէ կուրսում, այլ միայն ավարտելուց հետո: Փաստացի տեսական ամեն ինչ գիտեն ուսանողները, բայց պրակտիկը թույլ է: Կարծում են, որ 1 ամիս պրակտիկան քիչ է, պետք է շատացնել: Պրակտիկայի վայրում էլ շատ բաներ «աչքաթող են անում»: Մասնակիցների կարծիքով, եթե դիտարկենք քանի տոկոսն է պատրաստ հետագայում դառնալ մարզիչ–մանկավարժ, ու պարզվի ոչ մեծ

		տոկոսը, դրանից էլ կիետևի, ինչու պրակտիկային լուրջ չեն վերաբերվում հենց ուսանողները: Ներկաներից մեկի մոտ պրակտիկա անցել են և բավականին հետաքրքիր է անցկացրել՝ կարևորելով օրագրով նախատեսված կետերը: Իր պնդմամբ՝ պրակտիկային չգնալը գալիս է պրակտիկա անցկացնող մասնագետից: Մեկ այլ մարզչի մոտ էլ 2 հոգի պրակտիկա են անցել: Վերջինս չգալու հետ կապված նշեց, որ պրակտիկայի ղեկավարը, եթե կարևորի ու պահանջի, որ գալու դեպքում միայն կկարողանա «բավարար» ստանալ, ուսանողները հաստատ կգան: Ոլորտի հիմնախնդիրներից է, որ 90 տոկոսից ավելին այլ բնագավառում են աշխատում: Թե չէ լավ մասնագետի կարիք կա աշխատաշուկայում, բայց պահանջները շատ են, աշխատավարձը՝ քիչ: Ցածր ֆինանսավորումը և ուժային կառույցներում միայն դիպլոմի առկայության բավարար դիտարկումը վատ է անդրադառնում ուսանողների առաջադիմության և դասի հաճախման վրա: Հանրակրթական դպրոցների մասով խնդիրները մի փոքր ավելի են, քանի որ, օրինակ, ֆիզկուլտուրայի ուսուցիչներ աշխատանքի ընդունելիս մասնագիտական հմտություններ միշտ չէ, որ հաշվի են առնում: Տնօրեններն են ընդունում, իսկ ընդունելիս, մասնագետ չլինելով, կարող է «լավերին» չընդունի: Այդպիսի փաստացի դեպքեր նշեցին մասնակիցները: Գործատուն պիտի ընդունի որակյալին, բայց տնօրենը շատ դեպքերում ոչ մասնագետին է ընդունում: Գործատուն, աշխատանքի ընդունելիս, ոչ միշտ է հարցազրույցին մասնագետներ հրավիրում: Դա էլ հանգեցնում է աշակերտների մոտ մասնագիտական պատրաստվածության ցածր մակարդակի: Դպրոցն այսօր մի քիչ կտրված է սպորտային ոլորտից: Մարզադպրոցներում մարզիչ դառնում է արդեն ճանաչված, իմացած, լավ սովորած կադրը: Դպրոցում այդպես չէ, կարող է, կոպիտ ասած, կամայական մեկին ընդունեն որպես ուսուցիչ: Մարզադպրոցում հակառակն է, նոր մարզիչ ընդունելիս մյուս մարզիչների կարծիքը հաշվի են առնում, հարցնում են՝ ճանաչո՞ւմ եք նրան, թե ոչ, ինչ հաջողություններ է ունեցել և այլն:

4.	Առաջարկներ ՖԴՍՄ կրթական ծրագրում փոփոխություններ անելու վերաբերյալ, շրջանավարտների մասնագիտական կարողությունների զարգացման համար	Բուհի կրթական ծրագրերը լավն են: Մասնակիցները նշեցին, որ առաջնայնություն կտային ժամանակակից մեթոդներին և գիտելիքներին, ինչը, որ հիմա պետք է սպորտում: Խնդիրները ոչ թե բուհի կրթական ծրագրի մեջ են, այլ դպրոցական ծրագրերում: Հանրակրթական ծրագրերը կազմելիս «տարբեր մասնագետներից կտոր–կտոր վերցնում են, դարձնում ծրագիր», հետո դժվար է լինում իրականացնելը: Դպրոցներում Ֆիզկուլտուրայի առարկայի շաբաթական ժամերը 3–ից կրճատվել են 2: Արդյունքում չեն հասցնում բոլոր նյութերն անցնել պատշաճ մակարդակով: Իսկ եթե դպրոցի ծրագիրը լավը լինի, արդեն ինստիտուտ կգան պատրաստված: Մասնակիցները նշում են, որ արդիական մասնագիտական գրականության կարիք կա՝ «Նոր ձեռնարկներ ենք ուզում, ասում ենք հնացած են: Չնայած դրան, մի մասնագետ էլ մենք ենք, և մենք պետք է մեզնից պահանջենք, որ ձեռնարկներ ու ուղեցույցներ գրենք»: Առաջարկներ. • Ներառական կրթության վերաբերյալ թեմաներ ավելացնել կրթական ծրագրում կամ կազմակերպել սեմինարներ, դասընթացներ, • Գործնական և պրակտիկ ժամերը ավելացնել, • Ավելացնել սպորտին վերաբերող արդիական թեմաներ, • Սպորտային հեծանվասպորտի և սեղանի թենիսի դասընթացներ ավելացնել կրթական ծրագրում (քանի որ դպրոցական ծրագրում այդ սպորտաձևերն ավելացվել են):
5.	Մասնագիտական վերապատրաստման դասընթացներին մասնակցություն	Հանդիպման ընթացքում առաջարկվեց ֆիզիկական կուլտուրայի բնագավառում բազային կրթություն չունեցող ուսուցիչների համար կազմակերպել վերապատրաստման դասընթացներ հենց մարզադպրոցներում՝ յուրաքանչյուր մարզաձևի առանձնահատկու-թյունների վերաբերյալ ավելի հստակ պատկերացում կազմելու նպատակով: Եթե ուսուցիչներին ուղարկեն մարզադպրոցներ վերապատրաստման, ապա կտեսնեն, օրինակ վոլեյբոլի դասը ոնց է անցկացվում, խաղը կդատեն, գործնականում կտեսնեն դասն ըստ մարզաձևերի: Մանավանդ, երբ ուսուցչի բազային կրթությունը (բակալավրիատում) ոլորտային չէ, ինքը անցած չի լինում այդ գործնական դասընթացները: Մասնակիցները վերապատրաստումներ անցել են ՀՖԿՍՊԻ–ում, Սլավոնական համալսարանում և դպրոցներում: Մասնակիցներից 3–ը նաև կամավոր ատեստավորում էին անցել: Վերապատրաստման կարիք միանշանակ տեսնում են: Բացի ակադեմիական

		վերապատրաստումներից, մասնակիցներից ոմանք մասնակցել են նաև ֆեդերացիաների կազմակերպած միջազգային վերապատրաստման: Մասնակիցներից մեկը նշեց, որ ինստիտուտը ավարտելուց հետո մարզչական գործունեություն ծավալելով ինքնակրթվել է: Բոլորը համակարծիք էին, որ նպատակահարմար կլիներ մասնագիտական վերապատրաստման հնարավորությունը տրվեր հենց միայն ՀՖԿՍՊԻ-ին, քանի որ ոլորտային միակ բուհն է և մասնագետներն այստեղ են:
6.	Ինստիտուտի հետագա զարգացման առաջարկություններն՝ ըստ արտաքին շահակիցների	Մասնակիցների առաջարկները ինստիտուտի հետագա զարգացման վերաբերյալ. • Գնահատման համակարգում փոփոխություններ կատարել, մասնավորապես հաճախմանը տրվող 10 միավորը հանել, • Կիրառել ժամանակից դասավանդման մեթոդներ, • Ռեսուրսները բարելավել (մարզադահլիճ, մարզադաշտ, մարզական գույք), • Պարբերաբար սեմինարներ և վերապատրաստումներ կազմակերպել ինստիտուտում դպրոցների ուսուցիչների համար, • Ուսանողները հետաքրքրված դասի գան, հիմա սմարթֆոններն ու ինտերնետը խանգարում է, սովորելու ցանկությունը բացակայում է: Եթե ուսանողն ունենա ցանկություն, ինստիտուտը ունի փայլուն ՊԴ կազմ, գիտեիքն ու հմտությունները կապահովի, • Մասնակիցներից մեկը սովորել է ինստիտուտում գերազանց, և այն ժամանակ դասերն ու քննություններն անցկացնում էին մարզադաշտում: Հիմա դիմորդները հնարավոր է նաև դիմացի այգում հանձնեն վազքը: Ռեսուրսների խնդիր կա, դա պետք է զարգացնել, • Բացակայող ուսանողից քննություն չպետք է ընդունի ինստիտուտը՝ դրանով առաջնայնություն տալով դասահաճախումներին, մյուս կողմից էլ բարձրակարգ մարզիկ հանդիսացող ուսանողին էլ չպետք է զիջել, որպեսզի հետագայում նորմալ մարզիչ դառնա, • Սպորտաձևերից հայերեն գրականությունը քիչ է, պետք է հարստացնել, • Գործնական դասերը, մարզումները և դահլիճները շատ լինեն, ուսանողները կկապվեն մարզաձևի հետ և կշարունակեն ավարտելուց հետո էլ մնալ սպորտում, հետագայում մասնագիտություն չեն փոխի,

		• Մարզադպրոցը պետք է ունենա իր ուրույն ծրագիրը, մասնակիցներից մեկը համաձայն չէ ստանդարտեցված լինելուն, պետք է թողնվի իմպրովիզին, նոր վարժություն, հնարքներ կարող է կիրառվեն: Ծրագրերի արդյունավետությունը չափվում է վերջում մրցաշարերի մասնակցությամբ: Պետք է հաստատված ծրագրով նվազագույն ընդհանուր շեմը լինի, դա չկա:

ՖՈԿՈՒՍ ԽՄԲԱՅԻՆ ՔՆՆԱՐԿՄԱՆ
ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ
(ՀՖԿՍՊԻ կրթական ծրագրի և աշխատաշուկայի կարիքների գնահատում)

1. ԱՇԽԱՏԱՇՈՒԿԱՅԻ ԿԱՐԻՔՆԵՐ ԵՎ ՈԼՈՐՏԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

Ֆիզիկական դաստիարակության և սպորտի ոլորտում աշխատող ուսուցիչներն ու մարզիչները ներկայացրել են աշխատաշուկայի ներկա խնդիրները և կարիքները, որոնք ընդգրկում են թե՛ մեթոդաբանական, թե՛ կառավարման, և թե՛ անձնակազմի պատրաստվածության մակարդակին վերաբերող հարցեր:

ՀԻՄՆԱԿԱՆ ԽՈՇՈՐ ԽՆԴԻՐՆԵՐԸ

- **Մեթոդաբանական անհամապատասխանություններ՝** հանրակրթական դպրոցների և մարզադպրոցների աշխատանքային բովանդակությունը էապես տարբերվում է: Մարզադպրոցներում սաներն առավել մոտիվացված են, իսկ հանրակրթական դպրոցներում հաճախ բացակայում է ուսանողների մոտիվացիան:
- **Հոգեբանական հմտությունների պակաս՝** ուսուցիչներն ու մարզիչները հաճախ չունեն բավարար հմտություններ աշխատելու տարբեր սոցիալական խմբերի, հատկապես՝ ԿԱՊԿՈՒ երեխաների հետ:
- **Իրավական և վարչական տեղեկացվածության բացակայություն՝** ուսուցիչները հաճախ ծանոթ չեն ԿԱՊԿՈՒ երեխաների համար անհատական ուսումնական պլանների կազմման կարգերին, կիրառվող չափորոշիչներին և իրավական ընթացակարգերին:
- **Պրակտիկ հմտությունների զարգացման կարիք՝** բուհական կրթական ծրագրերում պրակտիկայի ժամերի ավելացումը կնպաստի շրջանավարտների մասնագիտական զարգացմանը: Դուալ կրթության նման ձևաչափի անհրաժեշտությունն ընդգծվում է:
- **Աշխատանքի ընդունելիս ֆիզկուլտուրայի ուսուցչի որակավորման չափանիշների հստակության պակաս՝** հանրակրթական դպրոցներում ուսուցիչների ընտրության գործընթացում հաճախ չեն կիրառվում մասնագիտական չափանիշներ:

- **Տեղեկատվական տեխնոլոգիաների կիրառման դժվարություններ՝** ուսուցիչներից ոմանք չունեն համապատասխան հմտություններ թվային գործիքների կիրառման ոլորտում:

2. ՄԱՍՆԱԿԻՑՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ԸՆԴԳԾՎՈՂ ԿԱՐԻՔՆԵՐԸ

Կրթական մակարդակում.

- Ներառական կրթության վերաբերյալ դասընթացների ընդգրկում
- Հնարավորության դեպքում պրակտիկ դասերի ժամաքանակի ավելացում
- Մարզիկների հոգեբանական աջակցություն ապահովող մոդուլների ավելացում
- Ֆիզկուլտուրայի առարկայի շրջանակներում գնահատման մեթոդների վերանայում՝ արդիականացում

Մասնագիտական պատրաստվածության մակարդակում.

- ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատելու համար վերապատրաստման դասընթացներ
- Ֆեդերացիաների և մարզադպրոցների հետ համագործակցությամբ գործնական վերապատրաստումներ
- Մասնագիտական գրականության թարմացում և նոր ձեռնարկների մշակում
- Մարզադպրոցների համար անհատական ծրագրեր կազմելու վերաբերյալ ուղեցույցների ապահովում

Իրավական և կառավարչական համակարգում

- Չափորոշիչների վերաբերյալ տեղեկատվական միջոցառումների կազմակերպում
- Մասնագիտական վերապատրաստումների կազմակերպման իրավունքը ՀՖԿՍՊԻ-ին վերապահելու առաջարկ
- Դասավանդման մեթոդների արդիականացում՝ սպորտային ոլորտի արդիական զարգացումներին համապատասխան

3. ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՀՖԿՍՊԻ-ԻՆ

Կրթական ծրագրերում

- ԿԱՊԿՈՒ երեխաների հետ աշխատանքի, ներառական մանկավարժության, սպորտային հոգեբանության առարկաների կամ ժամաքանակների ավելացում
- Սպորտաձևերի՝ նոր ավելացված (սեղանի թենիս, հեծանվասպորտ), առարկաների ընդգրկում
- Մասնագիտական գրականության հարստացում՝ հայերենով և միջազգային ժամանակակից աղբյուրներին հղումներով
- Պրակտիկ դասերի ժամաքանակների ավելացում կամ ստաժավորման հիմքով ուսումնառության ձևաչափի կիրառում

Ինստիտուցիոնալ մակարդակ

- Համագործակցություն հանրակրթական համակարգի հետ՝ չափորոշիչների մշակման և գործնական կիրառման խորհրդատվական աջակցություն ապահովելու նպատակով
- Սպորտային ենթակառուցվածքների արդիականացում (մարզադահլիճներ, մարզագույք)
- Մասնագիտական վերապատրաստումների կազմակերպում՝ այլ մասնագիտությամբ բակալավրի կրթությամբ ուսուցիչների համար

Ուսանողակենտրոն մոտեցում

- Սովորելու մոտիվացիայի բարձրացման համար ուսանողներին խթանող նոր մեխանիզմների ներդնում
- Ուսանողների դասահաճախման խստացված վերահսկողություն
- Հաճախման գնահատման միավորի վերանայում՝ որպես գնահատման գործիք

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Ֆոկուս խմբային քննարկման արդյունքները վկայում են, որ աշխատաշուկայում առկա են համալիր խնդիրներ, որոնք պայմանավորված են ինչպես ոլորտային ռազմավարությունների բացակայությամբ, այնպես էլ կրթական համակարգի որոշ օղակներում ճկունության պակասով: Կառուցողական համագործակցությունը բուհի և շահակիցների միջև կարող է նպաստել ոլորտում որակյալ մասնագետների պատրաստմանը՝ համադրելով տեսական պատրաստվածությունն ու գործնական կարողությունները: ՀՖԿՍՊԻ-ն, լինելով ոլորտում առաջատար բուհ, կարող է ստանձնել առաջնորդող դեր՝ թե՛ կրթական ծրագրերի բարելավման, և թե՛ վերապատրաստման միջոցով ոլորտային շարունակական զարգացման ապահովման գործում:

18.06"2025

«Ֆիզիկական դաստիարակություն և սպորտային մարզումներ» կրթական ծրագրի քննարկում

Հ/Հ	Անուն ազգանուն, հեռախոս	Կազմակերպություն	Էլ.փոստ	Ստորագրություն
1.	Շամամ Արզումանյան – 077 69 46 48	Կոտայքի մարզի Նոր Հաճնի ավագ դպրոց	shamamarzumanyan@mail.ru	
2.	Գուրգեն Բեգլարյան – 099 03 20 34	Կոտայքի մարզի Ջրառատի միջն, դպրոց	gurgenbeglaryan@mail.ru	
3.	Վիգեն ~~Հարությունյան~~ Գևորգյան – 094 49 01 65	Երևանի թիվ 93 միջն.դպրոց		
4.	Գայանե Արշակյան – 077 92 27 94	Աբովյանի Վ. Համբարձումյանի անվ. թիվ 10 հիմն. դպրոց	gayane.arshakyan.1993@mail.ru	
5.	Աննա Մարտիրոսյան – 098 22 00 61	Կոտայքի մարզի Բյուրեղավանի հիմն. դպրոց	anna85mane@gmail.com	
6.	Դավիթ Դավթյան – 094 78 30 29	Խաղային մարզաձևերի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց	davo.davtyan.94@mail.ru	
7.	Վարդան Ստեփանյան – 091 72 05 22	Խաղային մարզաձևերի օլիմպիական	xxvardanxx@gmail.com	

		մանկապատանեկան մարզադպրոց		
8.	Սարգիս Ստեփանյան – 055 56 88 31	Խաղային մարզաձևերի օլիմպիական մանկապատանեկան մարզադպրոց		
9.	Վարդան Ներսիսյան – 093 20 44 46	«Տորք Անգեղ» մարզամշակութային կենտրոն	vzdonerss@mail.ru	
10.	Վախթանգ Մկրտչյան – 044 144 100	«Տորք Անգեղ» մարզամշակութային կենտրոն	vik24box@gmail.com	
11.	Կամո Կիրակոսյան 093 59 03 50	«Տորք Անգեղ» մարզամշակութային կենտրոն	Kamo Kirakosyan59@mail.ru	
12.	Անի Անտոնյան 041 22 10 21	Աբովյան քաղաքի Գ. Ծառուկյանի անվան սպորտի և մշակույթի համալիր կենտրոն	antonyana782@gmail.com	
13.	Արամայիս Մուրադյան 077 38 17 33	Աբովյան քաղաքի Գ. Ծառուկյանի անվան սպորտի և մշակույթի համալիր կենտրոն	muradyan_aramayis@mail.ru	
14.	Ռուզան Մինասյան 094 555 683	187 դպրոց դպրաց.	ruzan.minasxan.2023@sponted.am	
15.				
16.				